ՍՈՎԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԹԻՎ.

ՍՈՎԻ ՎԵՐԱՑՈ՞ՒՄ, ԹԵ՞ ԹԵՐՍՆՈՒՑՄԱՆ ԽՈՐԱՑՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2024.3-106

Հիմնաբառեր. *սովի վերացում, թերսնուցման մակարդակ, պարենային անբավարարություն, սովի համաշխարհային համաթիվ*

Անի ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

2011 թ. ավարտել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղը և 2013 թ. ընդունվել ՀՊՏՀ ասպիրանտուրա: 2017 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

2015-2016 թթ. դասավանդել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում: 2016 թ.-ին աշխատանքի է անցել «Ամբերդ» հետազոտական կենտրոնում: 2017 թ.-ից մինչ օրս դասավանդում է ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնում:

ORCID - https://orcid.org/0000-0002-6883-455X

Տնտեսության կայուն զարգացման կարևորագույն նպատակներից մեկը սովի վերացումն ու բնակչության պարենային կարիքների բավարարումն է: Պարենային անբավարարությունը տնտեսությանն անկայունություն հաղորդող և սոցիալական լարվածություն առաջացնող լրջագույն սպառնալիք է: Հոդվածում կատարվել է սովի մակարդակի համեմատական վերլուծություն՝ ըստ առավել տարածված գնահատականի՝ Սովի համաշխարհային համաթվի (ՍՀՀ), որը բնակչության թերսնուցման յուրօրինակ ցուցիչ է: Ընդհանուր առմամբ, ՍՀՀ ձևավորման վերոնշյալ մոտեցումը տնտեսագիտական տրամաբանության շրջանակներում է: Համաթվի չորս բաղադրիչ-ցուցանիշները հնարավորություն են տալիս գնահատելու երկրների առաջընթացը՝ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների առումով: Կարելի է նկատել, որ 2015 թ.-ից ի վեր, արտաքին շոկերով պայմանավորված, նկատելիորեն դանդաղել է բնակչության սովի և թերսնուցման ցուցանիշների կրճատման տեմպը: Եթե որոշ երկրներ հաջողության են հասել սովի դեմ պայքարում, ապա մեծ թվով երկրներ ձախողել են՝ բախվելով սովի և թերսնուցման խորացող հիմնախնդիրներին, որոնք առավելապես կապված են ինչպես արտաքին շոկերի հաղթահարման, այնպես էլ կառավարման համակարգերի և ենթակառուցվածքների բարելավման, սոցիալական արդյունավետ քաղաքականության կենսագործման հետ:

Համաշխարհային տնտեսության զարգացման անորոշության և անկայունության պայմաններում ողջ մարդկության համար լրջագույն մար-

տահրավեր են եղել և շարունակում մնալ սովի հաղթահարումն ու պարենային կարիքների բավարարումը: Այս առումով, ՄԱԿ-ը որպես կայուն զարգացման նպատակ է սահմանել մինչև 2030 թ.-ը սովի վերացումը և բոլոր մարդկանց, մասնավորապես՝ աղքատների և խոցելի իրավիճակներում գտնվողների (այդ թվում՝ մինչև մեկ տարեկան երեխաների) համար անվտանգ, սննդարար և բավարար սննդի մատչելիության ապահովումը ողջ տարվա ընթացքում[1]: Սակայն այդ նպատակին հասնելը առաջիկա վեց տարիների ընթացքում թերևս անիրատեսական է: Այսպես՝ 2022 թ.-ին պարենային ապահովվածության ցուցանիշն աշխարհի համար կազմել է 29,6%, որը նկատելիորեն հեռու է նպատակային գնահատականից, իսկ բնակչության թերսնուցման մակարդակը՝ 9,2%, որն էլ միջին (չափավոր) հեռավորության վրա է նպատակից[2]: Բացասական է համարվում այն հանգամանքը, որ սովի և թերսնուցման մակարդակը բնութագրող վերոնշյալ ցուցանիշների մասով վատթարացման միտում է գրանցվել: Այսպես, օրինակ, 2017 թ.-ի համեմատ, 2022 թ.-ին թերսնուցված բնակչության թվաքանակի նկատելի աճ է գրանցվել՝ 572 միլիոն մարդուց հասնելով 735 միլիոն մարդու կամ տոկոսային արտահայտությամբ աճել է 1,7%-ով[3]:

2015 թվականից ի վեր, թեև տնտեսական առաջընթացին, չնչին դրական տեղաշարժեր են արձանագրվել սովի մակարդակի կրճատման ուղղությամբ: Սովի դեմ պայքարին առավելապես խոչընդոտել են COVID-19 համավարակով և ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված շոկերը, ինչպես նաև որոշ տարածաշրջաններում բախումները և կլիմայական փոփոխությունները: Ընդ որում, ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներն առավել խոցելի են պարենային անբավարարության և թերսնուցման հիմնախնդիրների նկատմամբ, քան բարձր եկամուտ ունեցողները: Դա մեծապես պայմանավորված է պետական անարդյունավետ կառավարմամբ, եկամուտների անհավասարությամբ և աղքատությամբ:

Ստորև կատարել ենք Սովի համաշխարհային համաթվի (Global Hunger Index) և դրա առանձին բաղադրիչների շարժընթացի վերլուծություն զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրների համար: Հարկ է նշել, որ համաթիվը մշակել են իռլանդական Concern Worldwide և գերմանական Welthungerhilfe ոչ կառավարական կազմակերպությունները՝ բնակչության թերսնուցման մակարդակի, սովի պատճառով մահացության և մի շարք այլ ցուցանիշների հիման վրա: Համաթիվը հնարավորություն է ընձեռում ուշադրության առանցքում պահելու բնակչության թերսնուցման հիմնահարցը, համակողմանիորեն հետազոտելու պարենային ապահովման հիմնախնդիրները՝ հատկապես այն երկրներում, որտեղ դրանք լրջագույն սպառնալիք են պարունակում: Այս առումով, համաթիվն ազգային, տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում սովի չափման և հաղթահարման յուրօրինակ միջոց է, որը բարձրացնում է իրազեկվածության մակարդակը, ընդլայնում սովի դեմ պայքարի գործիքակազմն ու կառուցակարգերը, հնարավորություն տալիս երկրների և տարածաշրջանների մակարդակներում համեմատություններ կատարելու՝ դիտարկման տիրույթում պահելով տարածաշրջանները, որտեղ սովի մակարդակը բարձր է, և պահանջվում են լրացուցիչ ջանքեր դրա հաղթահարման համար:

Սովի համաշխարհային համաթվի (այսուհետ՝ Համաթիվ) հաշվարկման հիմքում համալիր գնահատականների ձևավորման միևնույն մոտեցումն է. ընտրվում են ոլորտը նկարագրող հիմնական քանակական ցուցանիշները, առանձնացվում բաղադրիչ-ցուցանիշների արժեքներն ըստ առանձին երկրների, նորմավորվում, ապա դրանց արժեքների հիման վրա դուրս է

[1] Աղբյուրը՝ Կայուն զարգացման նպատակները Հայաստանում, Միավորված ազգերի կազմակերպություն Հայաստան, https://armenia.un.org/hy/sdgs/2

[2] Աղբյուրը՝ SDG Indicators Data Portal, Food and Agriculture Organization of the United Nations, https://www.fao.org/sustainable-development-goals-data-portal/data/

[3] Աղբյուրը՝ Global Hunger Index 2023: The Power of Youth in Shaping Food Systems, page 7, https://www.globalhungerindex.org/pdf/en/2023.pdf

բերվում ընդհանրական գնահատականը:

Անդրադառնալով Համաթվի կառուցվածքին՝ նշենք, որ դա հաշվարկվում է ներքոհիշյալ 4 բաղադրիչ-ցուցանիշների հիման վրա.

- բնակչության թերսնուցում՝ բնակչության այն մասնաբաժինը, որն օգտագործում է ոչ բավարար չափով կալորիաներ,
- երեխաների թերաճ՝ իրենց տարիքի համեմատ ցածր հասակ ունեցող մինչև 5 տարեկան երեխաների մասնաբաժինը, ինչն արտացոլում է քրոնիկ թերսնուցումը,
- երեխաների վտիտություն (նիհարություն)՝ իրենց հասակի համեմատ քիչ քաշ ունեցող մինչև 5 տարեկան երեխաների մասնաբաժինը, որը բնութագրում է թերսնուցման սրությունը,
- մանկամահացություն՝ մինչև 5 տարեկանը մահացող երեխաների տեսակարար կշիռը, ինչը, մասամբ, վկայում է անբավարար սնուցման և անառողջ միջավայրի մասին[4]:

Աղյուսակ 1-ում ներկայացված են Համաթվի հաշվարկման համար օգտագործված բաղադրիչ-ցուցանիշների տվյալների աղբյուրները[5]:

Համաթվի բաղադրիչ-ցուցանիշների արժեքների հավաքագրումից հետո դրանք նորմավորվում են հետևյալ բանաձևերի օգնությամբ.

1. Բնակչության թերսնուցման նորմավորված արժեք =
$$\frac{\text{Բնակչության թերսնուցում}}{80} \times 100:$$
2. Երեխաների թերաճի նորմավորված արժեք =
$$\frac{\text{Երեխաների թերաճ}}{70} \times 100:$$
3. Երեխաների վտիտության (նիհարության) նորմավորված արժեք =
$$\frac{\text{Երեխաների վտիտություն (նիհարություն)}}{30} \times 100:$$
4. Մանկամահացության նորմավորված արժեք =
$$\frac{\text{Բնակչության թերսնուցում}}{35} \times 100:$$

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Սովի համաշխարհային համաթվի (ՍՀՀ) բաղադրիչ-ցուցանիշների տվյալների աղբյուրները[6]

ՍՀՀ բաղադրիչները	Տվյալների աղբյուրը	Դիտարկվող տարիներն ըստ ցուցանիշների տվյալների			
		2000 թ. (122 երկիր)	2008 թ. (125 երկիր)	2015 թ. (125 երկիր)	2023 թ. (125 երկիր)
Բնակչության թերսնուցում	ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (ՊԳԿ), 2023	2000-2002	2007-2009	2014-2016	2020-2022
Երեխաների թերաճ և վտիտություն (նիհարություն)	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (WHO), 2023, ՅՈՒՆԻՍԵՖ, 2023, 2013 և 2009, ժողովրդագրական և առողջապահական հետազոտություններ, 2023	1998-2002	2006-2010	2013-2017	2018-2022
Մանկամահացություն	ՄԱԿ-ի Մանկական մահացության գնահատման միջգերատեսչական խումբ, 2023	2000	2008	2015	2021

[4] Աղբյուրը՝ Global Hunger Index, https://www.globalhungerindex.org/methodology.html

[5] Համաթվի հաշվարկման համար օգտագործվում են վերջին թարմացված տվյալները: 2023 թ.-ի փոփոխությունները դեռևս չեն արտացոլվում 2023 թ.-ի համաթվում:

[6] Աղբյուրը՝ Global Hunger Index 2023: The Power of Youth in Shaping Food Systems, page 39, https://www.globalhungerindex.org/pdf/en/2023.pdf

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Սովի համաշխարհային համաթվի արժեքային միջակայքերի նկարագիրը[7]

Համաթվի արժեքային միջակայքը	Ափիճանը
ՍՀՀ ≤ 9,9	Ցածր
ՍՀՀ 10,0 – 19,9	Չափավոր
ՍՀՀ 20,0 – 34,9	Լուրջ
ՍՀՀ 35,0 – 49,9	Տագնապալի (շատ լուրջ)
ՍՀՀ ≥ 50,0	Չափազանց տագնապալի (անհանգստացնող)

Վերոնշյալ մոտեցմամբ նորմավորված միավորների հիման վրա դուրս է բերվում Համաթիվը: Համաթվի հաշվարկման կարևորագույն մեթոդական առավելություններից մեկն էլ այն է, որ ընդհանրական գնահատականի բաղադրիչ-ցուցանիշներն ունեն տարբեր տեսակարար կշիռներ՝ ելնելով իրենց կարևորությունից: Այսպես՝ բնակչության թերսնուցման և մանկամահացության բաղադրիչներից յուրաքանչյուրը կազմում է Համաթվի 1/3-ը, իսկ բնակչության թերաճի և վտիտության (նիհարության) բաղադրիչներից յուրաքանչյուրը՝ Համաթվի 1/6-ը: Արդյունքում հաշվարկվում է Համաթիվը, որն արժեքներ է ընդունում 0-100 միջակայքում, ընդ որում, 0-ն՝ լավագույն և 100-ը՝ վատագույն արդյունքի համար: Համաթվի արժեքային միջակայքից ելնելով՝ գնահատվում են երկրում սովի մակարդակը և թերսնուցման լրջության աստիճանը (աղյուսակ 2): Ըստ այս սանդղակի՝ 2023 թ.-ին աշխարհի 9 երկրում սովի մակարդակը «տագնապալի» է եղել, իսկ 34-ում՝ «լուրջ»:

Համաթվի արժեքը ողջ աշխարհի համար 18,3 միավոր է, որը, ըստ սովի հիմնահարցի լրջության աստիճանի, համարվում է «չափավոր»: Դա ընդամենը 0,8 միավորով է ցածր 2015 թ.-ի նույնանուն ցուցանիշից՝ վկայելով այն մասին, որ պարենային կարիքների բավարարումը շարունակում է օրհասական մնալ աշխարհի բնակչության ճնշող մեծամասնության համար: Ավելին, վերջին տարիներին արտաքին շոկերը հանգեցրել են երկրների և բնակչության տարբեր խմբերի միջև սոցիալական բևեռացվածության, ինչն էլ ավելի է խորացրել պարենի մատչելիության հիմնախնդիրը:

Անդրադառնալով աշխարհագրական կառուցվածքին, կարելի է նկատել, որ սովի հիմնահարցն առավել հրատապ է Հարավային Ասիայի և Սահարայից հարավ Աֆրիկայի տարածաշրջանի համար, որտեղ Համաթիվը հասնում է 27 միավորի՝ վկայելով սովի «լուրջ» մակարդակի մասին (գծապատկեր 1):

Գծապատկեր 1-ից կարելի է նկատել, որ Համաթիվն ամենացածրն է Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջաններում: Չնայած թերսնուցման ցածր մակարդակին, այնուհանդերձ, բնակչության մի ստվար զանգված անխուսափելիորեն շարունակում է բախվել թերսնուցման հիմնախնդրին: 2020-2022 թթ. Արևելյան Եվրոպայի բնակչության 0,5%-ը և Կենտրոնական Ասիայի բնակչության 18,4%-ը առնչվել են չափավոր կամ խիստ պարենային անապահովության հիմնահարցին: ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի գյուղական բնակավայրերի բնակիչների 47%-ը չի ստանում սոցիալական աջակցություն, և տարածաշրջանի ՀՆԱ-ի ընդամենը 10,1%-ն է ներդրվում սոցիալական աջակցության ծրագրերում, որը նկատելիորեն զիջում է Եվրամիության նույնանուն ցուցանիշին (19,3%)[8]:

Համեմատական վերլուծություն կատարելով Հայաստանի և հարևան երկրների

[7] Աղբյուրը՝ Global Hunger Index 2023: The Power of Youth in Shaping Food Systems, pages 42-43, https://www.globalhungerindex.org/pdf/en/2023.pdf

[8] Աղբյուրը՝ Global Hunger Index 2023: The Power of Youth in Shaping Food Systems, page 12, https://www.globalhungerindex.org/pdf/en/2023.pdf



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Սովի համաշխարհային համաթիվն ըստ տարածաշրջանների, 2000 թ., 2008 թ., 2015 թ. և 2023 թ.[9]

նույնանման ցուցանիշների միջև՝ կարելի է նկատել, որ, ըստ Համաթվի, լավագույն արդյունք են արձանագրել Թուրքիան և Վրաստանը, որոնք հայտնվել են 20 լավագույն երկրների ցանկում: 2023 թ.-ին Հայաստանը զբաղեցրել է 25-րդ տեղը՝ առաջ անցնելով Ռուսաստանից (26-րդ տեղ), Ադրբեջանից (34-րդ տեղ) և Իրանից (41-րդ տեղ):

Հարկ է նշել, որ շոշափելի դրական տեղաշարժեր արձանագրել է Ադրբեջանը, որը 2015 թվականից է վեր 25,8%-ով բարելավել է իր գնահատականը, իսկ Հայաստանի համար այդ փոփոխությունը կազմել է 11,1% (աղյուսակ 3):

Ինչ վերաբերում է բաղադրիչ-ցուցանիշներին, ապա Հայաստանի դեպքում լավագույն արդյունքն արձանագրվել է ըստ մանկամահացության ցուցանիշի (1,1%), որով վերջինս գերազանցում է հարևան Իրանին (1,3%) և Ադրբեջանին (1,9%): 2015 թ.-ի համեմատ, Հայաստանը դրական տեղաշարժ է արձանագրել Համաթվի բոլոր բաղադրիչների առումով, բացառությամբ՝ երեխաների վտիտության (նիհարության) ցուցանիշի: Այս ցուցանիշով Հայաստանը (10,9%) նկատելիորեն հետ է մնում հարևան Վրաստանից (5,8%), Թուրքիայից (6%) և Իրանից (7,1%), ինչը վկայում է Հայաստանում թերսնուցման սրության խնդրի առկայության մասին (աղյուսակ 4):

Այսպիսով՝ COVID-19 համավարակը,

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Սովի համաշխարհային համաթիվը, 2000 թ., 2008 թ., 2015 թ. և 2023 թ.[10]

Երկիրը	2000	2008	2015	2023	Բացարձակ միավորի փոփոխությունը 2015 թ.-ից ի վեր	Տոկոսային փոփոխությունը 2015 թ.-ից ի վեր
Հայաստան	19,2	11,7	6,3	5,6	-0,7	-11,1
Ադրբեջան	24,9	15,0	9,3	6,9	-2,4	-25,8
Վրաստան	12,1	6,6	<5	<5	-	-
Իրան	13,7	8,8	7,7	7,7	0,0	0,0
Ռուսաստան	10,2	5,8	6,3	5,8	-0,5	-7,9
Թուրքիա	10,1	5,7	<5	<5	-	-

[9] Աղբյուրը՝ Global Hunger Index 2023: The Power of Youth in Shaping Food Systems, page 12, https://www.globalhungerindex.org/pdf/en/2023.pdf

[10] Աղբյուրը՝ Global Hunger Index 2023: The Power of Youth in Shaping Food Systems, page 44, https://www.globalhungerindex.org/pdf/en/2023.pdf

ԱՂՅՈՒՍԱԿ 4

Սովի համաշխարհային համաթվի բաղադրիչ-ցուցանիշները, 2000 թ. , 2008 թ., 2015 թ. և 2023 թ.[11]

Երկիրը	Բնակչության թերսնուցում (բնակչության նկատմամբ,%)				Երեխաների թերաճ (մինչև 5 տարեկան երեխաների նկատմամբ, %)				Երեխաների վտիտություն (նիհարություն) (մինչև 5 տարեկան երեխաների նկատմամբ, %)				Մանկամահացություն (մինչև 5 տարեկան երեխաների նկատմամբ, %)			
	'00-'02	'07-'09	'14-'16	'20-'22	'98-'02	'06-'10	'13-'17	'18-'22	'98-'02	'06-'10	'13-'17	'18-'22	2000	2008	2015	2021
Հայաստան	25,7	5,8	<2,5	<2,5	2,5	4,1	4,4	3,3	17,3	20,9	9,4	10,9	3,1	2,1	1,4	1,1
Ադրբեջան	16,8	<2,5	<2,5	<2,5	9,0	6,8	3,2	3,6	24,2	26,5	17,8	12,0	7,5	4,3	2,6	1,9
Վրաստան	7,2	3,5	3,6	2,9	3,1	1,3	0,6	0,6	16,1	11,8	6,0	5,8	3,7	1,7	1,0	0,9
Իրան	5,0	5,8	6,3	6,1	6,1	4,3	4,3	4,1	20,4	8,0	4,8	7,1	3,6	2,2	1,6	1,3
Ռուսաստան	4,0	<2,5	<2,5	<2,5	4,9	2,9	4,5	4,4	16,7	11,2	11,1	10,9	1,9	1,1	0,8	0,5
Թուրքիա	<2,5	<2,5	<2,5	<2,5	3,0	1,0	1,9	1,7	18,8	12,5	10,0	6,0	3,8	2,1	1,3	0,9

ռուս-ուկրաինական պատերազմը, կլիմայական փոփոխությունները, ինչպես նաև խորացող անհավասարությունները վերջին տարիներին նկատելիորեն դանդաղեցրել են սովի վերացման ուղղությամբ երկրների առաջընթացը: Սովի և թերսնուցման մակարդակը բնութագրող ցուցանիշներն ակնհայտորեն վատթարացել են՝ մեծացնելով 2030 թ. կայուն զարգացման նպատակային ցուցանիշներից շեղումը: Առավել ցածր «դիմադրողականություն» ունեցող երկրներն անխուսափելիորեն շարունակում են բախվել պարենային անապահովության հիմնախնդրին: Համաթվի կանխատեսումների համաձայն՝ ներկայիս տեմպերով 2030 թ. 58 երկիր չի հասնի սովի ցածր մակարդակի: Պարենային ապահովության ուղղությամբ երկրների հաջողությունը մեծապես կախված է նրանից, թե ինչքան արդյունավետ են նրանք հաղթահարում արտաքին շոկերը՝ միաժամանակ առանցքում պահելով որակական տեղաշարժերի հաշվին մրցունակ տնտեսության կառուցումը: Այս առումով, կայուն զարգացման նպատակներից սովի վերացումը գործնականում իրատեսական է գերազանցապես պարենային և սոցիալական ապահովության համակարգերի, կառավարման կառուցվածքների, ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված հետևողական և կենսունակ քաղաքականության իրագործման դեպքում:

[11] Աղբյուրը՝ Global Hunger Index 2023: The Power of Youth in Shaping Food Systems, pages 42-43, https://www.globalhungerindex.org/pdf/en/2023.pdf

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կայուն զարգացման նպատակները Հայաստանում, Միավորված ազգերի կազմակերպություն Հայաստան, https://armenia.un.org/hy/sdgs/2
2. Global Hunger Index 2023: The Power of Youth in Shaping Food Systems, https://www.globalhungerindex.org/pdf/en/2023.pdf
3. Global Hunger Index, https://www.globalhungerindex.org/methodology.html
4. SDG Indicators Data Portal, Food and Agriculture Organization of the United Nations, https://www.fao.org/sustainable-development-goals-data-portal/data/

Ани ХАЧАТРЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук

ГЕОЭКОНОМИЧЕСКАЯ ХРОНИКА

МИРОВОЙ ИНДЕКС ГОЛОДА: ИСКОРЕНЕНИЕ ГОЛОДА ИЛИ УГЛУБЛЕНИЕ НЕДОЕДАНИЯ?

Одной из важнейших целей устойчивого развития экономики является ликвидация голода и обеспечение продовольственных потребностей населения. Продовольственная небезопасность является серьезной угрозой, которая вызывает нестабильность в экономике и приводит к социальному напряжению. В статье проведен сравнительный анализ уровня голода по одному из наиболее широко используемых показателей – Глобальному индексу голода (ГИГ), который является уникальным индикатором недоедания населения. В целом, вышеуказанный подход к формированию ГИГ находится в рамках экономической логики. Четыре компонентных индикатора индекса позволяют оценить прогресс стран в достижении Целей устойчивого развития ООН. Можно заметить, что с 2015 года, из-за внешних шоков, темпы снижения показателей голода и недоедания населения значительно замедлились. Если некоторые страны достигли успеха в борьбе с голодом, то большое количество стран потерпели неудачу, столкнувшись с углубляющимися проблемами голода и недоедания. Это в значительной степени обусловлено как преодолением внешних шоков, так и улучшением систем управления и инфраструктуры, а также реализацией эффективной социальной политики.

Ключевые слова: *искоренение голода, уровень недоедания, продовольственная небезопасность, Глобальный индекс голода*

Ani KHACHATRYAN
Senior researcher at «Amberd» Research center, ASUE, PhD in Economics

GEOECONOMIC CHRONICLE

GLOBAL HUNGER INDEX: ZERO HUNGER OR DEEPENING UNDERNOURISHMENT?

One of the most important goals of sustainable economic development is to end hunger and ensure access to sufficient food for all people. Food insecurity is a serious threat that causes economic instability and social tension. This paper provides a comparative analysis of the level of hunger based on one of the most widely used assessments - the Global Hunger Index (GHI) - which serves as a unique indicator of the population's undernourishment. Overall, the methodological approach of calculation of the GHI aligns with economic logic. The four component indicators of the index make it possible to assess the progress of countries in terms of the UN's sustainable development goals. It can be observed that since 2015, due to external shocks, the pace of reduction of hunger and undernourishment indicators has significantly slowed down. While some countries have succeeded in fighting hunger, a large number of countries have failed, facing deepening issues of hunger and undernourishment. This is largely due to the way countries overcome external shocks, as well as the improvement of governance systems and infrastructure, and the implementation of effective social policies.

Keywords: *zero hunger, level of undernourishment, food insecurity, the Global Hunger Index*